ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՒԲԱՐԱՇԵՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Նուբարաշենի 9-րդ փ. հ. 4, (+374 11) 518-730,Էլ. փոստ՝ nubarashen@yerevan.am

№ 33/01- 1 04 դեկտեմբերի 2024թ.

«ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ Ս. ԿՈՎԱԼԵՆԿՈՅԻՆ
Ք. Արթիկ, Ղարիբջանյան 39

Ծ Ա Ն Ու Ց Ում

Պայմանագիրն միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «Կապիտալ Գրուպ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 05.09.2024 թվականին կնքված «ԵՔ–ԳՀԱՇՁԲ-24/144» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի 7 շենքի 2-րդ բնակարանի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»: Նույն պայմանագրի 1.2 կետի համաձայն «Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան»:

Երևանի քաղաքապետարանի և «Կապիտալ Գրուպ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 05.09.2024 թվականին կնքված «ԵՔ–ԳՀԱՇՁԲ-24/144» ծածկագրով գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի 7 շենքի 2-րդ բնակարանի վերանորոգման աշխատանքներ (ծավալաթերթ-նախահաշիվը իր մեջ ներառում է թվով 14 անվանում աշխատանքներ):

«Կապիտալ Գրուպ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Ս. Կովալենկոյի 22.11.2024 թվականին՝ Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարին ուղղված գրությամբ, հայտնել է, որ չի ցանկանում կատարել կնքված հ. «ԵՔ–ԳՀԱՇՁԲ-24/144» ծածկագրով գնման պայմանագրով սահմանված պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ

ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կատարողն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով»:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը,որ «Կապիտալ Գրուպ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը չի կատարել Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի 23.09.2024թ. գրության պահանջը՝ կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունները սկսելու վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը որ «Կապիտալ Գրուպ» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի հրաժարվում է կատարել կնքված պայմանագրով սահմանված պարտավորությունները, հետևաբար Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «Կապիտալ Գրուպ ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված

մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը՝ համապատասխանաբար 217.847 ՀՀ դրամ և 326.772 ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

2024-12-05 10:14:28 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Աշխատակազմի գլխավոր
մասնագետ-իրավաբան
Կատ.՝ Ա. Առաքելյան
(0 11)518340